

— Բայց անցեալ գիշեր դու ել այդտեղ իջար, Գագրիկ:

— Անցեալ գիշեր իջանք իրեն հետ՝ ինք ճրագն առջեւէն կ'երթար. եւ ես բրիչը ձեռքս ետեւէն. մինչեւ հասանք այդ մուկի ծակին բերանը, զգուշութեամբ անձայն՝ պատը ձեռքով քան թէ բրիչով քակեցինք, եւ նոյն բերանն էլ մեծցուցինք, որ աւելի դիւրին էր քան թէ քովի ամուր փայտէ դուռը բանալ, որ այդ ստորերկրեան կը հասէր: Իշխանը գլուխը ներս երկնցուց՝ երկայն ուշ գրաւ, սենեակը մարդ չի կար, ուստի երբ ծակն այնչափ եղաւ, որ ինք կրցաւ անցնիլ՝ ցատկեց ելաւ վեր եւ ճրագն առած սկսաւ ինձ անցնել նախ զէնքերը մէկիկ-մէկիկ, յետոյ բանալիքներու խուրձ մը, յետոյ զգեստները. վերջը կոտորեց բացաւ փոքրիկ երկու զգոցներ՝ պարպեց մէյիկները՝ այդ կաշեայ երկբերան մախաղին մէջ, որ պատեն կախուած էր, եւ երբ այն ել անցուց ինձ նոյն զգուշութեամբ՝ բայց բեռնաւորեալ այդ ամէն բաներով՝ մտանք ճամփուն մէջ. հոն այդ բանալիքներով իմ շղթայես գիս ազատեց եւ ելանք դուրս: Նախ գնացինք ախոռները, ուր երկու ձիապան կը խորդային, զանոնք զամեցինք գետին եւ անկից վերջ ընտրեցինք, թամբեցինք ու խռիւներ եւ խոտի խուրձեր բերինք լցրինք ամէն գլխաւոր դռներու առջեւ: Բան մը չի մոռցաւ նա՝ մեր եւ ձիերու ճամփու պաշարն ել մտածեր էր: Չարմանալի մարդ է:

— Ինձի ինչո՞ւ չիմացուցիր այս ձեր նախապատրաստութիւնը:

— Իշխանը կ'ըսէր թէ՝ նա շատ բարեսիրտ է, արիւն թափելու թշնամի է, աւելի լաւ է, որ ամէն գործ կատարուի եւ յետոյ իմանայ ինք:

— Դու ի՞նչ կարծես, Գագրիկ, աստուած մեզմէ հաշիւ չի՞ պահանջեր այդ արիւններուն համար, այդ հրդեհին մէջ ողջ-ողջ...

— Իշխա՛ն, բայց այդ մարդիկը մեր երկիրն հրով ու սրով քանդեցին, չորս տարուան մէջ ամէն օր սպաննեցին մեր դաքը, երբ չէին ուրանար եւ կը մեռնէին՝ շան սատակ կը համարէին: Մենք էլ այդ թաները աստուծոյ կը յիշեցնենք եւ ամէն բան կը վերջանայ:

Գրիգոր տեսաւ, որ Գագրիկ Սուրենի վարդապետութեան աշակերտներէն էր՝ վերջացուց խօսքը: Եւ դեռ երբ կը շարունակէին ճամփան նայեցաւ, որ սուրին քովէն ահագին մուրճ մը կախուած էր Գագրիկի գօտիէն, հարցուց թէ այդ զէնքը շատ օգտակա՞ր կը սեպեր:

— Ո՛հ իշխանիկս,— կ'ըսէր Գագրիկ,— այդ՝ սուրէ լաւ է ինձ համար, ես տեսայ Շէյխին սենեակը այդ եւ աչքս մնաց. երբ Սուրեն իշխանը ուշադրութիւն չէր